Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
2026-2027 ՈՒՍՏԱՐԻ, ԲԱԿԱԼԱՎՐԻ ԿՐԹԱԿԱՆ
ԾՐԱԳՐՈՎ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՆԵՐԲՈՒՀԱԿԱՆ
ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԾՐԱԳՐԵՐԸ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

021101.01.6 «ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ»

Ուսուցումը երկաստիճան է՝ բակալավրիատ և մագիստրատուրա: Բակալավրիատում ուսման տևողությունը չորս տարի է: Շրջանավարտը ստանում է արվեստագիտության բակալավրի որակավորում:

Դիմորդները մասնագիտական քննություն են հանձնում հետևյալ առարկաներից.

1-ին քննություն - «Գեղարվեստական լուսանկարչության հիմունքներ» (ԳԼՀ) (բանավոր)

Գեղարվեստական լուսանկարչություն բաժնում քննություն հանձնելու համար դիմորդից պահանջվում է լուսանկարչական տեխնիկայի, օպտիկայի, լուսանկարչությանն օժանդակող սարքավորումների, ֆոտոկոմպոզիցայի, լուսանկարչության պատմության վերաբերյալ տեսական և պրակտիկ գիտելիքներ, ինչպես նաև պատկերացում բնական և արհեստական լույսի մասին:

Դիմորդը քննության է ներկայանում իր լուսանկարած աշխատանքների ֆոտոալբոմով, որը պարտադիր պետք է պարունակի 20 լուսանկար՝ 13x18 կամ 15x21 չափսի և վերջիններիս էլեկտրոնային ֆայլերը սկավառակի վրա:

Դիմորդը պատասխանում է քննատոմսի հարցերին, որից երրորդը վերաբերում է իր ներկայացրած աշխատանքներից 2-3-ի տեխնիկական վերլուծությանը:

2-րդ քննություն - «Մասնագիտական հարցազրույց» (ՄՀ) (բանավոր)

1. Քննարկվում է դիմորդի ներկայացրած ֆոտոալբոմը, որտեղ պետք է լինեն իր կողմից լուսանկարած տեսարաններ, որում դրսևորվում են նրա գիտելիքները կադրի, սյուժեի, կոմպոզիցիայի, լույսի, գույնի վերաբերյալ: Աշխատանքները քննարկվում են դիմորդի հետ, որը պատասխանում է հանձնաժողովի առաջադրած հարցերին:

2. Ստուգվում է դիմորդի ինտելեկտը. նա բանավոր պետք է պատասխանի հանձնաժողովի կողմից առաջադրված հարցերին՝ հանդես բերելով իմացություն գրականության, լուսանկարչության, կերպարվեստի, կինոյի, թատրոնի, ճարտարապետության, քանդականգործության, հեռուստատեսության, երաժշտության և այլն մասին:

Մասնագիտական գրականության ցանկ

1. Б. Даниель. Искусство видеть, С.Петербург, 2002г.2. Д. Килпатрик. Свет и освещение, изд. ,,Мир,, , Москва, 1988г.
3. Л. Дыко. Основы композиции в фотографии, изд. ,,Высшая школа,, , Москва, 1988г.
4. Քոչար, Հայ լուսանկարիչներ, Երևան, 2007թ.:
5. «Հայկական սովետական հանրագիտարան», հոդվածներ կինոռեժիսորների, օպերատորների, նկարիչների, լուսանկարիչների, երաժիշտների, թատրոնի և թատերական գործիչների մասին:
6. Ա. Առաքելյան, Լուսանկարչություն, Հայպետհրատ, 1959:
7. «Ֆիզիկա» դասագիրք (օպտիկայի բաժին):
8. Б.Плужников. Занимательная фотография, изд. ,,Искусство,, , Москва, 1967 г..
9. Лапин А. Фотография как… М.; Издательство МГУ, 2003.
10. Гонт Л. Экспозиция в фотографии. М.; "Мир", 1989.
11. И.А.Головня. С чего начиналась фотография, изд.,,Знание,, , Москва, 1991г.
12. Э.Эйнгорн. Основы фотографии, изд. ,,Искусство, Москва, 1989г.

«ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ» ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1-ին քննություն -«Գեղարվեստական լուսանկարչության հիմունքներ» (ԳԼՀ) (բանավոր)

1 - 7 – միավոր է ստանում այն դիմորդը, որի պատասխանը և ներկայացրած ալբոմը չի համապատասխանում առաջադրված պահանջներին:

8 - 12 – միավոր ստանում է այն դիմորդը, որը հանդես է բերում տարրական իմացություն լուսանկարչական խցիկի կառուցվածքի, օպտիկայի և լուսանկարահանմանը աջակցող տեխնիկական սարքերի վերաբերյալ:

13 - 17 – միավոր ստանում է այն դիմորդը, որը, բացի վերը նշված գիտելիքներից,

տիրապետում է ֆոտոկոմպոզիցիայի, լույսի, գույնի, պատկերի հեռանկարի իմացությանը:

18 - 20 – միավոր ստանում է այն դիմորդը, որն այս բոլոր գիտելիքների իմացությունից բացի՝ ունի ստեղծագործական վառ երևակայություն, պատկերի յուրահատուկ ընկալում և արտակարգ մեկնաբանություն:

2-րդ քննություն -«Մասնագիտական հարցազրույց» (ՄՀ) (Կոլոքվիում)

(բանավոր)

1 - 7 – միավոր ստանում է այն դիմորդը, որը չունի լուսանկարչական ալբոմ և որի պատասխանները չեն բավարարում արվեստի վերաբերյալ առաջադրված բանավոր հարցերին:

8 - 12 – միավոր ստանում է այն դիմորդը, որը բավարար գիտելիքներ է հանդես բերում առաջադրված հարցերի վերաբերյալ, և որի կողմից ներկայացված ալբոմի մեկնաբանությունը ընդունելի է պահանջների առումով:

13 - 17 – միավոր ստանում է այն դիմորդը, որի ներկայացրած լուսանկարչական ալբոմը հետաքրքիր է, կարողանում է այն ճիշտ մեկնաբանել և առաջադրված հարցերին պատասխանելիս հանդես է բերում առարկայի լավ իմացություն:

18 - 20 – միավոր ստանում է այն դիմորդը, որի լուսանկարչական ալբոմը բացառիկ է, գերազանց և համապատասխանաբար կարողանում է մեկնաբանել այն:

Պատասխանելով առաջադրված հարցերին՝ դիմորդը պետք է հանդես բերի բացառիկ գիտելիքներ լուսանկարչական վարպետության և պատկերային արվեստների մասին:

021101.01.6 «ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ԼՈՒՍԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆ» ՄԱՄՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

1-ին քննություն - «Գեղարվեստական լուսանկարչության հիմունքներ» (ԳԼՀ) (բանավոր)

Քննությանը թույլատրվում են այն դիմորդները, որոնք ներկայացնում են ծրագրային պահանջներին բավարարող ֆոտոալբոմ:

Քննությունը հարցատոմսերով է, որոնք պարունակում են երեք հարց: Քննատոմսի երրորդ հարցը տրվում է քննողի կողմից և վերաբերում դիմորդի կողմից ներկայացված որոշ լուսանկարների տեխնիկական վերլուծությանը:

Քննությունը գնահատվում է մեկ ընդհանուր գնահատականով:

2-րդ քննություն-«Մասնագիտական հարցազրույց» (ՄՀ) (բանավոր)

Ուսումնասիրվում և քննարկվում է դիմորդի կողմից ներկայացված ֆոտոալբոմը: Ստուգվում են դիմորդի ստեղծագործական կարողությունները և մասնագիտական հարցերի ինքնուրույն մեկնաբանման մակարդակը, իմացությունը արվեստների մասին:

Քննությունն ընթանում է հարցազրույցի կարգով, արդյունքները գնահատվում են մեկ ընդհանուր գնահատականով: